# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան
համայնք,ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան 1փող.թիվ 2, Հեռ.
(094) 519030 , hatsavan.kotayk@mta.gov.am

N 264
*29 նոյեմբեր 2019թ.*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ՌՈՄԱՆՈՍ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ

Հարգելի պարոն մարզպետ

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ է ուղարկվում Հացավան համայնքի ղեկավարի 2019 թվականի նոյեմբերի 25- թիվ 59-Ա և նոյեմբերի 28-ի թիվ 60-Ա որոշումները:

Առդիր՝ 2 թերթ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Խաչատրյան*
*Հեռ./093-212366/*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
25 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 59-Ա

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 4-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2016 թվականի ապրիլի 14-ի N 17-Ն որոշումը՝

***որոշում եմ***

1. Հացավան համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպել հանրային քննարկում:
2. Հաստատել Հացավան համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը՝համաձայն հավելվածի:
3. Հանձրարարել համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանին՝համայնքապետարանի ինտերնետային կայքում և համայնքի տեղեկատվական կառավարման համակարգում տեղադրել Հացավան համայնքի 2020 թվականի բյուջեի նախագծի վերաբերյալ կազմակերպվող հանրային քննարկման հրավերը,ինչպես նաև այն փակցնել համայնքի ղեկավարի նստավայրում՝բոլորի համար մատչելի ու տեսանելի տեղերում և այն վայրերում,որոնք մատչելի են համայնքի բնակիչներին՝առնվազն մեկ տեղ յուրաքանչյուր երեք հարյուր բնակչի համար:
4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Անի Կարապետյանի վրա:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

20 19թ. նոյեմբերի 25
գ.Հացավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հացավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հացավան, (094) 519030, hatsavan.kotayk@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2019թվականի N 60-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Հայաստանի Հանրապետության Բյուջետային համակարգի մասին>> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով և հիմք ընդունելով Հացավան համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 21-ի թիվ 47-Ն որոշումը՝

***որոշում եմ***

1. Հացավան համայնքի 2019 թվականի բյուջեում կատարել վերաբաշխում.
   1) համայնքի բյուջեի 02.02.01. 4239 հոդվածից 4030 /չորս հազար երեսուն/ դրամ գումարը վերաբաշխել 09.02.01 4637 հոդված:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՇԱՎԱՐՇ ՍԱՐԳՍՅԱՆ**

2019 թ. նոյեմբերի 28
գ.Հացավան